ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Մարտունի,Շահումյան,2, Հեռ. 0262-40005,0262-43643

N 88

*22 փետրվար 2012թ.*

*<<ԻՄՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԿ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ*
*ՏԻԿԻՆ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ*

Ձեր 17.02.2012թ. թիվ 157/7 գրությանը հայտնում եմ, որ Մարտունի համայնքի 2011-2012թ.թ. բյուջեով ձյան մաքրման աշխատանքների կատարման համար առանձին գումարներ չեն հատկացվել: Ձյան մաքրման ծառայությունը իրականացնում է <<Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ը, որի սանիտարական մաքրման ծախսերի հոդվածում նախատեսված է նաև ձյան մաքրման համար անհրաժեշտ գումար, որը յուրաքանչյուր տարվա համար կազմում է շուրջ 1,5 մլն ՀՀ դրամ:

Հարկ եմ համարում նշել նաև, որ Ձեր գրությունում օրենքների հոդվածները և ժամկետները չհիշատակելու դեպքում էլ Դուք կստանաիք տեղեկատվություն պատշաճ ժամկետներում, քանի որ մենք պատրաստ ենք պատասխանելու ցանկացած նամակի և գրության:

*ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝*

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*
*4-36-43*